

**Անա ԿՆՅԱԶՅԱՆ**  
Երևանի պետական համալսարան

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄՆ  
ԱՆԳԼԻԱԿԱՆ «ԿԵՆՑԱՂԱՅԻՆ» ԱՆԵԿԴՈՏՆԵՐՈՒՄ**

Հանրույթում յորաքանչյուր անհատի համար ամրագրվել է տղամարդու կամ կնոջ գենդերային դեր: Հետազայում դրա հիման վրա ծևափորվել են տղամարդկանց և կանանց վարքագծերի առանձնահատկությունների, նրանցից սպասվող արձագանքների և գործողությունների, միայն տղամարդկանց կամ միայն կանանց համար ընդունելի գործունեության տեսակների վերաբերյալ որոշ ընդհանրական պատկերացումներ, այլ կերպ ասած՝ հասարակական գիտակցության մեջ ծևափորվեցին գենդերային կարծրատիպեր:

Սույն հոդվածի նպատակն է, անզիական «կենցաղային» անեկդոտներում, ուսումնասիրել գենդերային կարծրատիպերը, որոնք ընդհանրացումներ են կանանց և տղամարդկանց մասին:

**Քանայի բառեր.** գենդերային կարծրատիպեր, «կենցաղային» անեկդոտներ, լեզվամշակույթ, հումոր, համրույթ, կերպար, հասարակական գիտակցություն, տղամարդ, կին

Գենդերային կարծրատիպերը առավել հաճախ հանդիպում են «կենցաղային» անեկդոտների տեքստերում: Կարծրատիպերը ոչ միայն հեշտացնում են հաղորդակցումը՝ մատուցելով մտածողության տիպական նմուշօրինակ, այլև հաջող հաղորդակցությանը խոչընդոտող գործոն են, քանի որ հաճախ դրանք հաճագեցնում են երնիկական խմբի վարքագծի ոչ ճիշտ մեկնաբանմանը: Հաղորդակցողների այս կամ այն հանրային կամ ցեղային խմբին պատկանելությամբ պայմանավորված՝ կարելի է առանձնացնել կարծրատիպերի ամենատարբեր տեսակներ՝ ազգային, տարիքային, մասնագիտական, գենդերային և այլն:

Անեկդոտը նպաստում է գենդերային կարծրատիպերը ընկալելուն: Քանի որ անեկդոտներում գենդերային կարծրատիպերը հաճախ լինում են անհերեթ, ուստի ընկալման ու գիտակցման համար դառնում են ավելի մատչելի: Իսկ պատմած անեկդոտին հաջորդող ծիծաղը ոչ այլ ինչ է, եթե ոչ զգացմունքների լիցքաբափում: «Ծիծաղը պահանջում է միջավայր, ավելի քան մարդկային գործունեության որևէ այլ ձև: Հետևաբար, ծիծաղը կախված է միջավայրից, այդ միջավայրում տիրապետող հայացքներից ու պատկերացումներից. այն պահանջում է համախոներ» /Լիխաչև, Պանченко, 1976: 192/:

Անեկդոտը բույլ է տալիս շրջանցել կարծրատիպերի հետ կապված գենդերային պաշտպանիչ մեխանիզմների գործողությունները: Գենդերային կողմնորոշում ունեցող տեղեկատվությունը հաճախ դժվարությամբ է հասանելի դառնում մարդու գիտակցությանը, քանի որ հակասում է կարծրատիպային պատկերացումներին, որոնք դասվում են աշխարհի անհատական պատկերի

հիմնարարադրիչների թվին: Անեկդոտներ պատմելը քոյլ է տալիս գենդերային տեղեկատվությունը ներկայացնել՝ շրջանցելով վերոնշյալ պաշտպանիչ մեխանիզմները:

Հումորի լեզվամշակութային առանձնահատկություններն արտացոլված են Մ.Մ.Քախտինի, Վ.Ի.Ժելվիսի, Վ.Ի.Կարասիկի, Օ.Ս.Լեռնտովիչի, Դ.Ս.Լիխաչյովի, Ա.Ս.Պանչենկոի աշխատություններում /Բախտի, 1997; Ժելվիս, 1999; Կարասիկ, 1997; Լեոնտովիչ, 2002; Լիխաչև, Պանչենկո, 1976/:

Անեկդոտը բազմակողմ երևույթ է, որը հանրամշակութային վերլուծության առարկա է: Անեկդոտի տեքստի մակարդակում գոյություն ունեն վարքի ամրագոված նորմեր, ավանդական-աշխարհայցքային և սոցիալ-հոգեբանական ուղենիքներ և ազգային պատկերացումներ: «Կենցաղային» անեկդոտների տեքստերում գենդերային կարծրատիպերի հանրամշակութային առանձնահատկությունները բավականին ընդլայնված ու բազմազան են: Դրանք հասկանալու համար անհրաժեշտ են ընդհանուր հիմնարար գիտելիքներ շրջապատող աշխարհի կառուցվածքի մասին:

Անեկդոտների տեքստի բովանդակային վերլուծության հիման վրա վեր են հանվել այն թեմաները, որոնցում արտացոլված են առավել տարածված կարծրատիպային պատկերացումները կանանց և տղամարդկանց բնութագրական գծերի կամ գործողությունների մասին: Դրանք են.

- **ընտանեկան հարաբերություններ,**
- **ամուսնական անհավատարմություն,**
- **արտաքին տեսք,**
- **հիմարություն,**
- **շատախոսություն,**
- **հարբեցողություն:**

Այժմ առանձնաբար դիտարկենք անգիտական «կենցաղային» անեկդոտներում՝ գենդերային կարծրատիպերի արտահայտման առանձնահատկությունները յուրաքանչյուր ոլորտում:

**Հնտանեկան հարաբերություններ:** Սա աշխարհի ցանկացած երկրում անեկդոտների ամենավառ թեմաներից է: Յուրաքանչյուր հանրամշակութային միջավայրում ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ անկեղուտները շատ են: Սակայն ազգային խառնվածքի յուրահատկությունից բխող տարրեր կարծրատիպերի և տարրեր հանրույթների ներկայացուցիչների լեզվամտածողության պատճառով անեկդոտներն ունեն ազգային-մշակութային յուրահատկություններ: Ընտանեկան կյանքի մասին անեկդոտներում իրացվում են հասարակության մեջ ընտանեկան կյանքի վերաբերյալ ձևավորված կարծրատիպերը:

Անգիտական «կենցաղային» անեկդոտներում կինը ձգտում է ամուսնանալ, թեկուց և ոչ երկար ժամանակով և ոչ առաջին անգամ: Դա թերևս կապված է համընդիմանուր տարածում գտած այն կարծիքի հետ, որ կինը պարտադիր պետք է իրեն դրսևորի ընտանիքում: Կինը պատրաստ է նույնիսկ ամուսնության առաջարկ տեսնել այնտեղ, որտեղ դա անգամ չի էլ ենթադրվում: Հասնելով իր

նապատակիմ՝ կինը հասկանում է, որ լնտանեկան կյանքը այն աստիճան ոռնատիկ չէ, որքան թվում էր նախքան ամուսնությունը, և սկսում է հեզնել կամ նույնիսկ քննադատել ամուսնուն:

Այսպես օրինակ

- 1) *The bride, upon her engagement, went to her mother and said, "I've found a man just like father!" Her mother replied, "So what do you want from me, sympathy?"*

Քիչ չեն այն «կենցաղային» անեկդոտները, որոնցում տղամարդը բավարարված չէ ընտանեկան կյանքով և դավաճանում է կնոջը: Այսպես, հաջորդ անեկդոտում ամուսնական հարաբերությունների բացասական գնահատականն արտահայտվում է հեզնանքի միջոցով:

- 2) *Two Englishmen are playing golf. One has been taking aim for a long time and can't strike. "I am not sure of myself today. I'm afraid I shall not hit the aim - my wife is standing over there". The other agrees, "Yes, it is difficult to hit from such a distance".*

Տվյալ անեկդոտում զրուցակիցները (տղամարդիկ) խոսում են նշանակետին խփելու մասին, սակայն թիրախի վերաբերյալ նրանց պատկերացումները տարբեր են. մեկը խոսում է խաղագնդակի համար արված փոսիկի մասին, մյուսը՝ կնոջ: Հեզնանքն այն է, որ երկուսին էլ թվում է, թե իրենք նույն բանն ի նկատի ունեն:

Որպես ընդհարման պատճառ՝ ամուսնական անհավատարմության թեման անգլիական «կենցաղային» անեկդոտներում արծածվում է բավականին հաճախ: «Կենցաղային» անեկդոտների բովանդակային վերլուծությունից երևում է, որ կնոջ անհավատարմությունը երեք անգամ ավելի հաճախ է հանդիպում, քան ամուսնու:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում առկա է նաև, այսպես կոչված, երկակի դավաճանության գործոնը, երբ դավաճանում են թե՛ կինը, թե՛ ամուսինը: Մեր կողմից ուսումնասիրված նյութի բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ մեծ մասամբ հանդիպում են «կենցաղային» անեկդոտներ անառակաբարո կնոջ կյանքի մասին:

Դեռևս անտիկ շրջանից սկսած կնոջը բնութագրել են որպես խելացի և խորամանկ արարած. համարվում էր, որ կինը իր մտավոր ունակություններով զգալիորեն գերազանցում է տղամարդուն: Իր խորամանկությամբ ու ճարպկությամբ կինը հեշտությամբ կարող էր ստիպել տղամարդուն ամուսնանալ իր հետ:

Գոյություն ունի կարծրատախա այն մասին, որ կինը պատմականորեն տան օջախի պահապանն է և պարտավոր է կատարել տնային ամբողջ աշխատանքը: Այս կարծրատախաը բավականին հաճախ է հանդիպում անգլիական «կենցաղային» անեկդոտներում:

Այսպես օրինակ

- 3) *As a boat is about to sink, a female passenger jumps up frantically and announces: "If I'm going to die, I want to die feeling like a woman."*

*She removes all her clothing and asks: "Is there someone on this ship who is man enough to make me feel like a woman?"*

*A man stands up, removes his shirt and says: "Here, iron this!"*

Կարելի է փաստել, որ գոյություն ունեն մեծ քանակությամբ անգլիական «կենցաղային» անեկդոտներ, որոնք շոայլող, վատնող կանանց մասին են: Այսպես, հաջորդ «կենցաղային» անեկդոտում նկարագրվում են երկու կանայք, որոնք միմյանց քանիկարժեք զարդեր են ցույց տալիս: Նրանցից մեկը մյուսին հարցնում է, թե նա ինչպես է մաքրում իր աղամանդներն ու զմրուխտները՝ հավելելով, որ դրանք մաքրելիս ինքն օգտագործում է ամենալավ ու քանիկարժեք կոնյակն ու շամպայնը: Երկրորդ կինը պատասխանում է, որ եթք իր աղամանդները կեղտոտվում են, ինքը պարզապես դրանք դեռ է նետում:

4) *Mrs Kelvinside was displaying her diamond necklace, ruby bracelet and emerald brooch to her friend Mrs Morningside in the ladies' loo.*

*"How do you clean them?" asked Mrs Morningside. "I always use finest cognac to wash my diamonds. But I find the sapphires come out best if they are dipped in champagne."*

*"Oh, when mine are dirty I just throw them away," said Mrs Kelvinside .*

Այսպիսով, աղամանդները դեռ նետելի ավելի մեծ շոայլություն է, քան դրանք քանիկարժեք կոնյակով մաքրելը, ուստի երկու սնապարծ կանանցից ավելի հարուստ է *Mrs Kelvinside*-ը:

Դիտարկենք «կենցաղային» անեկդոտների մյուս օրինակները, որոնցում հանուն փողի կանայք պատրաստ են ամեն ինչի:

Այսպես օրինակ

5) *The train was travelling along when a beautiful young woman entered the compartment which was deserted except for a businessman reading his paper.*

*The man peered over his paper and asked "Would you let me have sex with you for a dollar?"*

*"Certainly not!" exclaimed the young woman, and the businessman returned to his paper.*

*A short while later he looked across again and said "Would you let me have sex with you for a million dollars?"*

*After a brief pause, the woman replied "yes, I suppose I would." Again the man returned to his newspaper.*

*A few minutes later the man asked "Would you let me have sex with you for five dollars?"*

*"Certainly not!" replied the young woman, getting angry now "What kind of girl do you take me for?"*

*"We've already established that" replied the man, "We're just haggling over the price!"*

Ուշագրավն այն է, որ «կենցաղային» անեկդոտի միջոցով ներկայացվող կերպարները, որպես կանոն, ծրագրված տեսք ունեն՝ այս կամ այն թերությունն

ընդգծող պիտակավորմամբ: Ժամանակի ընթացքում այդ պիտակները նպաստում են կայուն կարծրատիպերի մշակմանը: Կարծրատիպերը, որոնք մարմնափրում են կանանց առտնին գիտակցության մասին հատուկ պատկերացումները, ոչ միայն հանրագումարի են թերում որոշ տեղեկություններ, այլև հոգական վերաբերմունք են արտահայտում առարկայի նկատմամբ:

Կարծրատիպային պատկերացումը, թե կնոջ մեջ ամենակարևորը արտաքինն է, վերլուծության ենթարկված «կենցաղային» անեկդոտներում տուկա է ինչպես կանանց, անպես էլ տղամարդկանց գիտակցության մեջ: Առաջին դեպքում կանայք իրենք են ձգտում բարեկավել իրենց արտաքին տվյալները: Մյուս կողմից, տղամարդիկ գնահատում են արտաքուստ գրավիչ կանանց և ծաղրում ոչ անթերի արտաքինով կանանց:

Այսպես օրինակ

- 6) *A man stopped at his favorite watering hole after a hard day's work to relax. He noticed a man next to him ordered a shot and a beer. The man drank the shot, chased it with the beer and then looked into his shirt pocket. This continued several times before the man's curiosity got the best of him. He leaned over to the guy and said, "Excuse me, I couldn't help but notice your little ritual, why in the world do you look into your shirt pocket every time you drink your shot & beer"? The man replied, "There's a picture of my wife in there, and when she starts lookin' good, I'm headin' home"!*

Անգլիական «կենցաղային» անեկդոտների կորպուսում կնոջը որպես հասարակության իրավահավասար անդամ ընդունելու թեման առհասարակ հազվադեպ է: Արձանագրված օրինակներում կնոջ կողմից տնային պարտականությունները կատարելը համարվում է բնական: Անգլիացի տղամարդկանց մեծ մարդ կարծում է, որ կինն առաջին հերթին պետք է լինի լավ տնտեսուիի, նրանք իրենց կանանց մեջ չեն ընդունում այնպիսի հատկությունների առկայությունը, ինչպիսիք են հիմարությունը, կովարարությունը, խորամանկությունը:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներից շատերը նվիրված են ավելորդ քաշի դեմ պայքարի թեմային: Այդ կատակների զավեշտական տպավորությունն այն է, որ կանանց համար ավելորդ քաշի դեմ պայքարելն անօգուտ է:

Այսպես օրինակ՝

- 7) *A young woman was having a physical examination and was embarrassed because of a weight problem. As she removed her last bit of clothing, she blushed. "I'm so ashamed, Doctor," she said, "I guess I let myself go." The physician was checking hers eyes and ears. "Don't feel ashamed, Miss. You don't look that bad."*
- "Do you really think so, Doctor?" she asked.*
- The doctor held a tongue depressor in front of her face and said, "Of course. Now just open your mouth and say moo."*

Վերլուծված անեկդոտներում տուկա է կարծրատիպային այն համոզմունքը, որ կնոջ համար ամենակարևորը արտաքին տեսքն է: Առանձնանում են

այն անեկդոտները, որոնցում կանայք հավակնում են ավելի լավ տեսք ունենալու, քան ունեն իրականում:

**«Կնոջ շափից դուրս շատախտության»** կարծրատիպում մենք առանձնացրել ենք կանանց հետևյալ հատկությունը՝ խոսել շատ ու առանց թեմայի: Գոյություն ունեն բազմաթիվ անգիտական «կենցաղային» անեկդոտներ կանանց շաղակրատության ու կովարարության մասին:

Այսպես օրինակ՝

- 8) *During their silver anniversary, a wife reminded her husband: "Do you remember when you proposed to me, I was so overwhelmed that I didn't talk for an hour?" The hubby replied: "Yes, honcy, that was the happiest hour of my life."*
- 9) *A husband read an article to his wife about how many words women use each day . . . 30,000 to a man's 15,000. The wife replied, "The reason has to be because we have to repeat everything to men".*

Սորյա-կենցաղային խնդիրների շարքում գերակշռում է հարբեցողության թեման: Սակայն տվյալ արատի ներկայացումը ոչ թե հանդուժողական քնույթ է կրում, այլ դիտարկվում է որպես տղանարդկային հպարտության տարր և, յուրահատուկ տարբերանշան: Անդրադառնանքը **զինարքութիւնի իրավիճակին**, որը բավականին լայնորեն ներկայացված է անգիտական անեկդոտներում:

Այսպես օրինակ՝

- 10) *A man enters into a bar, and the waiter comes and asks him "What do you want to drink sir?" The customer points out to a guy laying on the floor and replies "Whatever that guy was drinking."*

Գինարքութիւն իրավիճակը գոյություն ունի անգիտական մշակույթում և առանձնահատուկ կերպով արտացոլվում է «կենցաղային» անեկդոտներում: Մեծ թվով անեկդոտներ կան, որոնցում կարեորը ոչ թե գինարքութիւնը գործընթացն է, այլ այն, ինչ ծավալվում է դրա համապատկերում: Անգիտական անեկդոտները կառուցված են նույն սցենարով և, որպես կանոն, սկսվում են հետևյալ արտահայտությամբ. **“Two drunks stumble out of a pub ... , A man enters into a bar... , There was once a man who was in a bar, terribly drunk”** և այլն: Նշյալ անեկդոտներում զինարքությունը խնդում է միայնակ և բնութագրվում է որպես “drunk”:

Անգիտական «կենցաղային» անեկդոտներում զինարքութիւն իրավիճակի առավել տիպական մասնակիցը ամուսնացած արական սեռի անձն է: Կինը անգիտական «կենցաղային» անեկդոտներում չի խնդում, սակայն հանդես է գալիս որպես հակառակորդ, օրինակ՝ գրծող անձի կնոջ (կամ գրքանչի) դերում: Անեկդոտների այս համաշարում կնոջ տարբերակիչ առանձնահատկությունը առողջ և սերունդը շարունակող լինելն է, որն ել հարբեցողությունը, բնրամոլությունը և սեռական սանձարձակությունները բացառապես տղամարդու իրավասությունն է դարձնում:

Ամփոփելով վերև ասվածը՝ անհրաժեշտ է նշել, որ կարծրատիպերի ընդհանուր օրինաչափությունն այն է, որ տղանարդիկ ընկալվում են որպես տիրական, անկախ, ազրեսիվ, գերիշխող, եռանդուն, համարձակ, ոչ հուզական,

կոպիտ, առաջարեմ և իմաստուն: Կանանց, ընդհակառակը, բնորոշում են որպես ոչ անկախ, հեզ, քոյլ, երկշոտ, հուզական, զգացմունքային, հիմար և սնահավատ: Սակայն ապացուցման կարիք չտնի այն փաստը, որ կարծրատիպերի աղբյուրները իրական հարաբերություններն են, որ հենց հարաբերությունների բնույթից (համագործակցային կամ մրցակցային, գերիշխողական կամ ենթարկվողական) են կախված կարծրատիպերի բովանդակությունը, հուզական երանգավորումը և ճշմարիտ լինելը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бахтин М.М. Проблема текста в лингвистике, филологии и других гуманитарных науках. Опыт философского анализа // *Русская словесность. От теории словесности к структуре текста. Антология.* Под ред. проф. В.П. Нерознака. М.: Academia, 1997.
2. Жельвис В.И. Об одном виде эвфемистической замены // *Жанры речи:* сборник научных статей. Саратов: Изд-во ГосУНЦ «Колледж», 1999, № 2.
3. Карасик В.И. Анекдот как предмет лингвистического изучения // *Жанры речи:* сборник научных статей. Саратов: Изд-во ГосУНЦ «Колледж», 1997, № 1.
4. Леонтович О.А. Русские и американцы: парадоксы межкультурного общения. Волгоград: Перемена, 2002.
5. Лихачев Д.С., Панченко А.М. «Смеховой мир» Древней Руси. М.: Наука, 1976.
6. Химик В.В. Анекдот как феномен культуры // *Материалы круглого стола 16 ноября 2002 г.* СПб.: Санкт-Петербургское философское общество, 2002.
7. Шмелева Е.Я., Шмелев А.Д. Фоновые знания в русском анекдоте // *Доклады международной конференции «Диалог».* М., 2003.
8. Sharpe J. The adult joke book. London: Arcturus Publishing Limited, 2004.

**А. КНЯЗЯН – Реализация гендерных стереотипов в английских «бытовых» анекдотах.** – В человеческом обществе всегда существовало разделение социума на две группы – мужчины и женщины. Таким образом за каждым индивидом в социуме закрепилась гендерная роль мужчины и женщины. На их основе позднее сформировались некие обобщенные представления об особенностях поведения мужчин и женщин, об ожидаемых от них реакциях и действиях, о приемлемых только для мужчин или только для женщин видах деятельности – иными словами, в общественном сознании сформировались гендерные стереотипы. Нашей целью было показать, как гендерные стереотипные представления об образе мужчины и женщины также находят свое проявление в английских «бытовых» анекдотах.

**Ключевые слова:** гендерные стереотипы, анекдоты, лингвокультура, юмор, социум, образ, социальное сознание, мужчина, женщина

**A. KNIAZIAN – Realization of Gender Stereotypes in English Anecdotes.** – In human society, there has always been the division of society into two groups - men and women. Thus, gender roles of men and women have been entrenched for each individual in the society. Based on them later some generalized representations regarding the behaviour of men and women, their expected reactions and actions acceptable only for men or only for women's activities have been formed – in other words, gender stereotypes have been formed in the public consciousness.

The aim of the paper is to show how gender stereotypical ideas about men and women are manifested in English anecdotes.

**Key words:** gender stereotypes, anecdotes, linguoculture, humor, community, image, public awareness, male, female